

ՀԱՅ ԿԵՈՉ ԵԶՍԿԱՆ ՏԻՊԱՐ ՄԸ

ՏՈՔԹ. ԼԻԼԱԻ ԿԻԼԵՂԵԱՆ

ԿԻՆ ՂԵԿԱՎԱՐ, ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ ԵՒ
ԲԵՄԱԽՕՍ

Ձեր երեւակայութեան առջեւ նկարեցէք Ամերիկահայ բեմ մը, ասկէ երեսուն եւ հինգ կամ քառասուն տարի առաջ: Հաւաքեցէք խոսուներամ, խանդավառ ու հայրենասէր հայերու բազմութիւն մը:

Բացէք վարադուրը եւ ձեզի թող ներկայանայ Ամերիկահայ առաջին կին ղեկավարը՝ միջհասակ, թխաղէմ, պայծառ ու թափանցիկ աչքերով, նրբիրան ու շնորհալի շարժումներով:

Հիմա երեւակայեցէք որ բեմին վրայ մարմնացող ղեկերիկ այս տեսիլներէն իմ կը սկսի խօսիլ: Բառերն ու նախադասութիւնները այնպիսի անուշութեամբ կը սահին իր բերնէն որ ամբողջ մթնոլորտը քաղցրութեամբ կը մազնիսանայ: Հանդիսականները յափշտակութեամբ քարացած են հմայիչ այս կնոջ սրտառուչ ու հայրենասիրական խօսքերով: Ու որոտընդոտ ծափերու ալիքներով ծայր կ'առնէ: Շատեր կը փութան բեմին ետեւ ատենախօսուհին շնորհաւորելու փափուկ հաճոյքին համար:

Հիմա կրկնեցէք այս տեսարանը, բաղմապատկեցէք եւ ձեր բեմը փոխադրեցէք Փիլատեսիոյ, Նիւ Եորք, Պոսթոն, Տիթթոյի, Չիքագոյ, Ամերիկայի մէկ ծայրէն միւսը, ամէն տեղ ուր հայերէն լեզուն կը խօսուի, ամէն տեղ ուր երկու հայեր զիրար կը բարեւեն, ու դուք կ'ունենաք Տոքթ. Լիլաի Կիլեղեանը:

Ամերիկահայ առաջին կին կազմակերպիչը, առաջին կին հանրային դործիչը, առաջին կին մտաւորականը եւ բեմախօսը՝

անդուդական եւ ամէնուն սիրելի Տոքթ. Լիլաին:

Հայկական եղերերգութեան առաջին տարիներուն իսկ Տոքթ. Լիլաի Կիլեղեանը արդէն հրապարակ իջած էր, ցեղին ցաւը իր սրտին մէջ սեղմած, օղնութեան հասնելու համար տարադրեալներուն:

Թրքահայերու աննկարագրելի տարազրուութիւնը ցնցած էր ամբողջ Ամերիկահայութիւնը եւ Հայ Ազգային Միութեան հովանաւորութեամբ քողովի ու կազմակերպչական ժողովներ տեղի կ'ունենային հայաշատ կեդրոններու մէջ: Այս ժողովներուն արդիւնքը պիտի ըլլար կամաւորական շարժումը, որուն միացան տասնեակ հազարաւոր հայեր ու զացին մինչեւ Կիլիկիա եւ Կովկաս, ջարդուած ժողովուրդի վրէժխնդրութեամբ վառուած եւ աղբային ղեղեցիկ երազներով խանդավառ:

Ամերիկայէն մեկնող բոլոր երիտասարդ ու միջին տարիքով կամաւորները մէկ կամ միւս առիթով լսած էին Տոքթ. Լիլաի Կիլեղեանի հրաշունչ խօսքերը, որոնք տակաւին կը բորբոքէին իրենց սրտերուն մէջ:

— Օղնենք մեր եղբայրներուն:

Այս էր օրուան կարգախօսը այդ օրերուն: Եւ Տոքթ. Կիլեղեան տարաւ զայն Ամերիկայի ամենամութ անկիւնները, ցնցեց ու ոտքի հանեց հայութիւնը, խօսեցաւ ու հմայեց, խանդավառեց եւ իր հայրենասիրութեամբ համակեց ամբողջ Ամերիկահայութիւնը:

Այս նշանաւոր հայ կնոջ կեանքը առաւելապէս կապուած է, սակայն Ամերիկահայ կանանց շարժման հետ: Իրբեւ առաջաւոր կին մտաւորական, 1914 թուականին Temple University-էն իրրեւ թիշկ շրջանաւարտութենէն անմիջապէս յետոյ, իր գլխաւոր մտահոգութիւնը եղաւ Ամերիկահայ կնոջ յետամնաց ու ողբալի վիճակը:

— Պէտք է հայ կիներ դուրս գայ խոհա-

նոցէն եւ մասնակից դառնայ հասարակական շարժումներուն:

Այսպէս վճռած էր երիտասարդ բժշկուհին: Եւ այդ վճիռը դործնականացնելու նպատակով անկիւս, ուրիշներու օժանդակութեամբ, հիմնեց Հայ Ազգային Կարմիր խաչը, որ կարելի է ըսել թէ՝ կը հանդիսանայ Ամերիկահայ առաջին կանանց կազմակերպութիւնը: Տոքթ. Կիլեղեան դարձած էր ոչ ինչ ու միջ ուժը այս կազմակերպութեան, որ կարճ ատենէն տասնեակ մասնաճիւղերով արդէն իսկ տարածուած էր այս դաղութիւն մէջ, ներառելով հարիւրաւոր հայ կիներ, որոնք արաւելով անգամ ըլլալով դուրս կու գային խոհանոցէն ու մասնակից կը դառնային մեր ժողովուրդին ու ազգին համար կենսական հարցերու լուծման:

Յետագային Հայ Ազգային Կարմիր խաչի փոխուցաւ Պետական Հայ Կարմիր խաչի եւ պաշտօնական կապ հաստատեց խորհրդային Հայաստանի Պետական Հայ Կարմիր խաչին հետ: Տոքթ. Լիլաի Կիլեղեան, տարիներով երեսի վրայ ձգեց իր բժշկական յաջող ասպարէզը եւ շրջեցաւ դաղութիւն դաղութիւն, խօսեցաւ մեր նորածաղ Մայր Հայրենիքի մասին, անոր սիրով համակեց անտարբեր զանդուածները եւ այդպիսով հանդիսացաւ ոսկի կամուրջ մը մեր երկրին եւ Ամերիկահայութեան մէջ: Անկիւս հայ կնոջ սորվեցուց նախաձեռնութեան ոգին, կազմակերպչական կարողութեամբ եւ հասարակական գիտակցութեամբ օժտեց զայն եւ ի վերջոյ յաջողեցաւ խոհանոցէն դուրս քաշել հայ կիներ եւ անոր տալ հասարակական մարդու գիմարի:

Իր այս ազդասիրական ու անձնուէր ջանքերը լիովին վարձատրուեցան երբ Հայաստանի կառավարութիւնը զինքը Պետական Հայ Կարմիր խաչի պաշտօնական ներկայացուցիչը նշանակեց Ամերիկայի մէջ: Իսկ Ամերիկայի կազմակերպութիւնը զինքը անսխալութեամբ, տարիներով պահեց նա -



ՏՈՔԹ. ԼԻԼԱԻ ԿԻԼԵՂԵԱՆ

խաղահոլթեան պաշտօնին վրայ եւ յետագային անոր տուաւ Պատուոյ Նախագահի պատուանշանը:

Ամերիկահայ կեանքին մէջ ամենախորունկ հիացման ու ժողովրդականութեան առարկան դարձած էր Տոքթ. Լիլաի Կիլեղեան, եւ բաւական էր որ յայտարարուէր՝ թէ ինք գլխաւոր խօսողներէն մին պիտի ըլլար, արդէն սրահները կը լեցուէին եւ մարդիկ խօսուներամ կու գային ունկնդրելու հանրածանօթ այս կնոջ պերճախօսութիւնը:

Տոքթ. Լիլաի Կիլեղեան ամէն տեղ էր: Չկար հասարակական ու ազգային շարժում մը, որուն իր մասնակցութիւնը չբերէր: Չկար բեմ մը, որ չպճնադարձուէր այս սքանչելի կնոջ տիրական դէմքով: Կարմիր խաչ, Ազգային Միութիւն, Կուսակցութիւն, Եկեղեցի, Ուսանողական Միութիւն, Յառաջդիմական Ընկերակցութիւն եւն., ամէն տեղ, ուր իրեն կարիք կ'ըլլար՝

